«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-748-20.12.2023-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. Առաջարկում ենք գործող օրենքի 6-րդ հոդվածը թողնել անփոփոխ, քանի որ ներկայացված փոփոխությունները հիմնականում վերաբերում են ըստ արժևորման չափանիշների հուշարձանների դասակարգմանը, իսկ ըստ ներկայացվող առաջարկի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով հաստատված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում ընդգրկված բոլոր հուշարձանները կարող են լինել համամարդկային նշանակության:

Բացի այդ, հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների սահմանումների փոփոխությունները որևէ կերպ հիմնավորված չեն և կրում են այլընտրանքային (տեխնիկական) բնույթ:

2. Նախագծի 2-րդ հոդվածով՝ նոր խմբագրությամբ շարադրվող 7-րդ հոդվածի 2-րդ մասի անհրաժեշտությունը չկա, քանի որ ինչպես նշված է նախագծի հիմնավորման մեջ, արդեն իսկ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է՝ Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության շրջանակներում 1954 թ. մայիսի 14-ի «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Կոնվենցիան, որն ունի բազմաթիվ կարգավորումներ և դրանք բոլորը հնարավոր չէ նույնությամբ արտացոլել բնագավառի գործող օրենսդրության մեջ, իսկ առանձին հոդվածների բառացի ներառումը հիմնավորված չէ:

Վերոգրյալով պայմանավորված նախագծի 2-րդ հոդվածով կատարվող փոփոխության անհրաժեշտությունը բացակայում է:

3. Օրենքի նախագծի 5-րդ հոդվածով՝ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը առաջարկում ենք խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

«Հուշարձաններն զբոսաշրջության նպատակով օգտագործելու դեպքում զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձինք համապատասխան պայմանագրեր են կնքում սեփականատերերի հետ»:

4. Նկատի ունենալով, որ նախագծի ընդունման պարագայում անհրաժեշտություն է առաջանալու այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարել, ուստի նախագծում անհրաժեշտ է նախատեսել անցումային դրույթ՝ դրանում նախատեսելով համապատասխան մարմինների կողմից ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման նախատեսվող ժամկետները՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջները: